



ՌԵԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵԾԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՆՇՄԱՐԲ ԵՒ ՆՇԻԱՐԲ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես երես 225)

ԺԸ. Հովուականութենէն երասխայ՝ Բա- սենոյ երկու մասերուն միջոցէն շատ հեռու է. և վերինէն դէպ 'ի Ստորինը կ'իջեցնէ շուտով, եթէ չուզէ մէկն ճամբէ դուրս և հեռու մնացեալ տեղե- րու ալ այց ելնել: Բասենոյ ընդարձա- կութեան և երասխայ աղբերականց ծործորներու և ձորակներու մէջ 'ի հար- կէ պիտի ըլլան ոչ սակաւ հին և նշա- նական տեղուանք. որոցմէ մէկ երկուքն զիս ալ ճամբէս չեղեցին. ամենէն գըլ- խաւորն էր Անիկ կամ Անուկայ-Բերդն. որուն համբաւն ալ կամուրջին պէս հռչակուած և տարածուած է այս կող- մերս և ալ շատ հեռու կողմեր. և աւե- լի զարմանալի շինուածոյն և զրիցն հա- մար՝ զարմանալի շինող կամ ծագում մ'ալ ունեցած պիտի ըլլայ. զոր ոչ միայն հիմայ գուշակել տայ այլազգական ա- նունն ճիւղան-գալէ, իբրև քաջաց կամ

երիտասարդաց բերդ, այլ և հին հայ- կական անունն, որ հեթանոսական և Հայկազանց դարերէն դուրս և մինչև հիմայ մնացեր է. որովհետև բնութիւնն տնկեր է Անուկայ արմատն, յանդը- նութիւնն պատեր է անոր զլուխը, քա- ջութիւն և վախ՝ փոփոխակի հակելով՝ պսակեր և պահեր են պատուարները. հնութիւն, բնութիւն և բռնութիւն, իբրև ահեղ և զարմանալի շղթաներ հիւսած կախեր կապեր են զԱնիկ մեր հայրենեաց հազար ու մէկ յիշատակա- րանաց մէջ: — Իրեք աշխարհաց՝ կար- նոյ, Այրարատայ և Տուրուբերանի սահ- մանակցութեան միջոց, Բասենու հա- րաւագոյն խորշերը, Պինկէօլէն իջած Մուրցի (Ուշուշուրէի) վտակաց մէկուն ձորա գլուխը, շար մը ջրածին բլրոց մէջ կ'ամբառնայ հրածին քարալեռ մ'ալ, պասալտեան հերձակտուր ապա-

ռած քարերով. որոյ ստորոտն է Աւնիկ գեղը, իբր 60 տնով. բնակիչքն մահմէտական, բայց Հայու արեան նշան ունին: Գեղին հիւսիսային կողմէն կը բարձրանայ կարմրագոյն լեռնաբլուրն 600', շեպ և շիտակ. հարաւային երեսը՝ բոլորովին տաշած պատի պէս կ'երևի: հիւսիսայինը՝ կարգ կարգ պարսպով պատած. արևմուտքէն ուրիշ բլուրներ կը կաշին, բայց շատ ցած ըլլալով՝ այս կողմէն ալ սեպուհ և դատած կ'երևայ. իսկ արևելքէն դժուարակոխ ժայռեր և կոշկոտներ ձգուած են ուրիշ բլուրներու միջոց. որոյ վրայէն կամ միջէն միայն կարելի է դժիւսանման ճամբայ մը բանալ Աւնիկայ մօտենալու համար: հիւսիսային կողմն ալ վարէն կիպ բլուր մը կայ, բայց վերի դին զատուած է, իբրև թէ ճգրուած ըլլար մեծ լեռնաբլրէն, և իր գլխէն հոս հասնելու համար՝ դար վեր դիւական կամուրջ մը պէտք էր ձգել. և այնպէս ալ եղած է կ'ըսեն ատենօք, և դեռ չէնքի կամ գերանաց մնացորդաց նմանութիւն կ'երևի հոն: Բարալերան գազաթն՝ ուրիշ շատ հրաբրդիսի բաժակաց նման՝ իրեք պատուռուած ունի, կամ իրեք ժայռեր ցցուած 40—50 ոտք բարձրութեամբ: — Ո՞վ կըրնայ այս արծուախաղաց ամպախաղաց կէտերուն միջոց բոյն կամ տուն դնել. և ինչպիսի բնակութեան. ապահովութեան համար, եթէ յանդրգնութեան և մեծագործութեան նշանակ: Որն ալ ըլլայ՝ անշուշտ սովորական հանձար կամ հասարակ մարդ մը չէր Աւնը կայ բերդին կանգնողն. կամ նորահնար արուեստ մը գիտէր այնպիսի տեղ չէնք շինելու, կամ հոն ելնելու նորապանշ կերպ մը, ոտք մը, թիւ մը. հրամազ, բոցամօրուս, ծխաշունչ վահագնի պէս մէկ մը պէտք էր ըլլալ, որ ծիրանի ծովերէ և ամպերէ վազելով՝ ծիրանէնկար եղեգնաշար թևերով՝ կարենար հոս ելնել իջնել և բերդ մը կանգնել: Այս բանն շատ աւելի հաւատարի է՝ քան թէ այն նկարագիրն՝ զոր մեր նախնի վիպասանք կ'ընծայէին վահագնի. նաև հաւանական իսկ կարծուի. վասն զի

մեր քաղաքաշէն նախնեաց մէջ կը դասուի «վահանկն կամ վահագն» որ զՈւնիկ շինեաց», ինչպէս գրուած է առ համառօտ աշխարհագիրս մեր, և է անշուշտ Աւնիկս այս:

Բարալերին այն մասն՝ որ վերոյիշեալ հիւսիսակողմն եղած քարաբլրին գագաթան կը հաւասարի, պարսպով պատած է, բայց հիմայ կիսակործան թողած. չորս դին անանկ դար վար վախուտ է, որ հազիւ քանի մը ոտք դնելու կէտ կայ՝ հարաւային կողմը. ասկէ վեր դարածն տեղ մը կայ, բայց ան ալ դար վար, և ժայռերով ցցուած, որոց միջոցը պատ քաշած է. տեղ մ'ալ ժայռերու մէջ դահաձև գոգ մը կտրուած բացուած է բնակութեան համար, թէպէտ և պատի նշան չերևար. քովը ջրամբար մը փորած է. մէկ դին ալ խոռոչ մը կայ, ուսկից՝ կ'ըսեն թէ կամարակապ քարակտուր ճամբայ բացուած է: Ասկէ վերն է այն եռաժայռ գագաթն, որոց միջոց ալ կ'երևին քիչ մը պատի մնացորդք, այլ չէնքի շնորհք չկայ. միջին կամ հիւսիսային ժայռին տակը փորուած է բնակութեան համար, նոյնպէս արևելեան և արևմտեան ժայռից վրայ ալ գտուած շիտակ տեղերը. այս (արևմտեան) հատուածին քով ալ կայ փորուած ջրամբար մը. անկէ վեր քարայրի պէս փորուած մը: Ասոր քով չգիտեմ բնութիւն թէ դիւթութիւնն բուսուցեր է վայրի վարդենի մը, որ այս ամայութեանն մէջ փոխանակ զուարթութիւն տալու՝ զարմանք և սոսկում մը կը պատճառէ. վասն զի հմայութեանց առիթ մ'ալ եղած է: Ափշեցայ մնացի երբ անոր կարճուկ ճղերուն վրայ կախած տեսայ հնոտի և ցնցոտի զգեստուց պատառներ, զոր նանրահաւատ ուխտաւորք, և շատն հիւանդ ուխտաւորք, կախեր էին, բժշկութիւն գտնելու յուսով. ո՞ր գիտէ, թերևս ոմանք 'ի դարձին՝ կեանքերնին ալ կորուսնելով՝ այն յիրաւի դժիւսեւանելի քարերուն մէջ, ուր ելնելու և քաշելու համար՝ կարգէ դուրս ոյժ մը, հարկ մը կամ հաւատք մը պէտք է. քաշելն ալ

ուղի տեղ՝ շատ անգամ ձեռքով և ճանկերով իմանալու է, օգնական առնելով գաւազաններ և չուաններ: Բուսական ցեղէն միայն այն յանդուգն վարդենին չէր տեսածս, այլ դահավէժ սորերու և դարերու վրայ իրենց տեղ գտած էին սևապտուղ ծորենին, արծաթ տերև կարճուկ զղեարենին, և աւելի վարի աստիճանի բոյսեր, Հայկական տղրեկախոտն, Տերեփուկն (*Centaurea Colcitra*), Մեղրածուծն կամ Խորտակ ծոթրինն (*Marrubium*), Հինգտերևուկն, Շահոգրամն, ձայկական քոսքսուկն (*Scabiosa*), սանդրածն հասկով ընդեղէն մը, Առուոյտը, և ուրիշ ասոնց նման ու աննման բոյսեր: Քիչ ժամանակի և դըժուարութեամբ շարժուած տեղի մը մէջ դժար էր շատ բան փնտռել. մանաւանդ որ Աւնիկ ալ բռնութենէ ազատ մնացած չէր. շէնքերն բոլորովին կործանած. քարի մը վրայ միայն տաճիկ գրութեան մը մնացորդ տեսայ, Աստուծոյ անունով, աւելի բան մը չկարնալով որոշել: Բնութեան շրջակայ տեսարանն ալ շատ ընդարձակ չէր՝ կեցած տեղերէս, վասն զի մօտը լեռներ կան. որոցմէ արևելեան կողմն եղած մէկն ալ Աւնիկայ լեռ անուանեցին գիւղին բնակիչքն, հարաւային կողմն ալ Մէրքէշէյի՞ կ'անուանէին լեռ մը, որ կարմիր ու ճերմակ կճանման քարերով կը փայլիլըւար:

Այսպիսի կերպարանքով և դիրքով բերդ մը՝ չեմ տարակուսիր որ շատ հին պատմութիւն և դիպուածներ պիտի ունենայ, և հազարաւոր տարիներ չէն ու նշանաւոր կանգնած պիտի ըլլայ, շատ բռնաւորներու վախէ անվախ մը նացած, և վերջապէս նորահնար աւերիչ գործիքներով կամ բնութեան մեծ ցնցմամբ մը կործանուած: Մեր պատմութեանց մէջ առաջին անգամ Աւնիկայ անունն կը յիշուի Ս. Լուսաւորչի մարմնոյն գիւտովը. գտնողն Գառնիկ Ճգնաւոր Դ դարուն վերջերը կամ 'ի Եին, այս գեղէն էր հայրենեք, թէ պէտ ոմանք ալ Կթնի կ'անուանեն աւոր գեղը: Շատ հաւանական է որ հա-

յոց և Պարսից տէրութիւնները վերցուելէն ետե՛ Արաբացիք՝ թէ և դժարութեամբ՝ տիրած ըլլան Աւնիկայ, և ժգարուն սկիզբը թողած Յունաց կայսերաց, երբ ասոնք արևմտեան Հայոց նորէն տիրել սկսան: Յաջորդ դարուն կիսուն՝ երբ Թուրքաց ասպատակն ելաւ, աւերեց զՈկոմի և զԱրծն, ասոր ալ մօտեցաւ. իրմէ առաջ հոն փախեր ապաւիններ էին բազմութիւն մարդկան շրջակայ վիճակաց՝ իրենց ըզզակներովը. զորոնք տեսաւ հեռուանց աւերածուն Տուղրիլ, բայց « ոչինչ փոյթ արար, « կ'ըսէ ժամանակակից պատմիչն. քան « զի 'ի հայելոյն միայն՝ ծանօթ զայն « առնէ » . այսինքն մէկ նայելով իմացաւ որ իրեն համար կարնոյ բերդին պէս և այլ աւելի աւնաւիկ տեղ մ'էր Աւնիկ. և թողուց զնաց: Դար դարի և տեաք տերերու յաջորդեցին հոս ալ: ԺԳ դարուն մէջ Թաթարաց տէրութիւնն առհասարակ կը տարածէր. ԺԴ-ին մէջ սկսաւ տկարանալ. այս դարուս վերջերը Հայաստանի մեծ մասին տիրեցին երկու Թիւրքմէն ցեղապետք, իրենց դրօշներուն նշաններովը կոչուած Ագ-գոյունլու և Գարա-գոյունլու. այս ետքինիս ցեղապետին՝ Գարա Մէհմէտի որդւոց մէկն՝ Մսրըր կամ Միսիր անուամբ՝ կը տիրէր Աւնիկայ, կամ այս բերդիս ապաւիններ էր, իրեն ցեղէն և իրմէ առջիններէն զօրաւոր աշխարհակալ և աշխարհաւեր Լէնկթիմուրի արշաւանաց ատեն. որ առջի անգամ յարևմուտք երթալուն՝ Տուղրիլի պէս նայեցաւ բերդին վրայ, և չորս զինաւոր շտրկելով անցաւ զնաց. իսկ երկրորդ անգամուն 1395-ն ամառը՝ եկաւ անդառնալի կամքով կամ բերդը նուաճելու կամ անոր տէրը: Նախ թղթով հրաւէր զրկեց Մսիրայ՝ որ առանց պատերազմի գայ հնազանդի. և երբ նա պատասխան չտուաւ՝ իր թոռներէն մէկը (Միրզա Մէհմէմէտ Սուլթան) խաւրեց վրան, յետոյ ինքն ալ Ալաշկերտէն ելաւ, Գէօսէ տաղ լեռնէն անցաւ, և Աւնիկայ ստորոտը մօտենալուն՝ մէկէն թմբկաց և տաւղաց դովմամբ հրա-

մայեց յարձրկիլ. զիւղաւանն՝ որ պարբս պով պատուած էր՝ շուտով առնուեցաւ և քակուեցաւ. Մսիր՝ բերդը քաշուեցաւ, լերան ամեն դիւրակոխ կողմերը ամրացրնելով պատերով, քարերով և զռներով: Լէնկթիմուրի զօրքն վահաննին գլխնուն վրայ առած՝ աշխատութեամբ ելան ինչուան բերդին պատերուն և դրան քով. մեքենաներ կանգնեցին պատերը ծեծելու և նետաձիգ ըլլալու բերդին պահապաններուն: Մըսիր լաւ գիտէր Լէնկթիմուրի ոյժն և յամառութիւնը, որու դէմ բան չէր դիմանար. սակայն այնպիսի անառիկ բերդ մ'ալ շուտով թողուլը՝ շատ ծանր էր իրեն. աղաչաւոր խաւրեց՝ որ հաւանի աշխարհակալն ընդունիլ իր հնազանդութիւնը, բայց ներէ իրեն չգալուն, որ սոսկ վախէն էր: Լէնկթիմուր պատուեց Մսիրայ նուիրակները և ընծաներով դարձուց, իմացրնելով որ հարկ է Մսիրայ իջնել և իրեն գալը: Սա դժարեցաւ և յանդրգնութեամբ պատուիրեց իր թիւրքմէնաց որ քար ու նետ թափեն թաթարաց վրայ: Երկրորդ օրը երզնկայի իշխոյն թահարդան՝ որ Լէնկթիմուրի նիզակակից էր, յարմար դիրք մը գտնելով ելաւ ձայն տուաւ Մսիրայ, և յորդորեց անօգուտ քաջութիւնը թողուլ և շուտով գալ հնազանդիլ, որպէս զի անվտանգ ապրի: Մսիր տաղնապած՝ նորէն աղաչաւոր խաւրեց խանին իր երախայ որդին և իր խնամի զօրավար մը՝ Սադըլմիշ անուն, գեղեցիկ հայկական ձիեր ընծայ խաւրելով. բայց խանն իմանալով անոր յողդոյող միտքը՝ Սադըլմիշը կապել տուաւ: Նոյն գիշերը զօրքերն աւելի բազմութեամբ յարձրկեցան՝ գրեթէ ինչուան լերան գլուխը ելան, այն կամարաւոր տեղոյն քով՝ զոր յիշեցի. բերդէն նետ մը ընկաւ բանակին մէջ թըղթով մը, որ կ'իմացընէր թէ բերդապահք մեծ վստահութիւն ունէին Սադըլմիշի վրայ, եթէ նա ետ չդառնար՝ յուսահատելով անձնատուր կ'ըլլան: Լէնկթիմուր բերել տուաւ Մսիրայ տըղայն՝ որ վեց տարուան էր, բայց իր

դայեկներէն խրատուած անսնկ լալով աղաչանքով խօսեցաւ, որ բռնաւորն գլթալով իր թուանցը նման զգեստներ հագուց անոր, վիզն ալ ոսկիէ մանեակ մը դրաւ, և նորէն թուղթ գրել տալով դարձուց Մսիրայ, որպէս զի չուանայ բերդէն իջնելու: Թիւրքմէնք տեսնելով տղայն և լսելով Լէնկթիմուրայ պատգամը՝ սկսան գանգըտիլ Մսիրայ դէմ. որ այս անգամ ալ չգիշանելով՝ դեսպանները պատուով դարձուց, բայց ետ չկեցաւ պատերազմէ: Լէնկթիմուր պատուիրեց որ մեքենաները մօտեցընեն և քարէ ուռմքերը թափեն պատերուն վրայ. որով քանի մը տուն կործանեցին, շատ մարդ ալ նետահար ըրին. բայց իրենք ալ շատ փնասուեցան պաշարողաց քարաձգութենէն: Մսիր այս անգամ աւելի յուսակտուր՝ իր մայրը աղաչաւոր խաւրեց, որ եկաւ ընկաւ խանին ոտքը, և լալով իմացուց որ որդւոյն ըրածն ոչ այնքան յանդրգնութենէ էր՝ որքան վախէն և չփոթութենէն, և ներումն կը խնդրէր. Լէնկթիմուր իր սովորականէն աւելի երկայնմրտութիւն ցուցընելով խոստացաւ ներելու եթէ շուտով գայ Մսիր. և մօրը պատուոյ զգեստ հագցընել տուաւ. նոյնպէս իր երկու տիկնայքն ալ (Սէրայի-Միւլք խանըմ և Թուման-աղա) ծանրագին զգեստներ պարգևեցին ու ճամբեցին զնա. որ եկաւ խրատեց զորդին խոնարհելու իրմէ զօրաւորին: Սակայն նա բռնաւորին համբերութիւնը տկարութիւն սեպելով, կամ բողորովին յուսահատելով՝ այս անգամ ալ չուզեց տեղէն շարժիլ: — Այն ատեն Լէնկթիմուր պատուիրեց իր մէկ թուանը (Օսման-Ակա) որ մէլձուր մը շինել տայ. այս մէլձուր ըստածն՝ ձեռագործ բլուր մ'է: Օրերով ճամբայ հեռու երթալով զօրքերն՝ ուր որ ծառ գտան ջարդեցին բերին, Աւնըկայ ստորոտը դիզեցին, և վրան քար ու տիղմ խառնած կը թափէին. այսպէս վրայէ վրայ դիզելով ու թափելով՝ քիչ օրուան մէջ բարձրացուցին արուեստական բլուրը բնական քարաբլրէն վեր. գունդ մը զօրաց վրան

եղաւ, և սկսաւ կարկրտի պէս քար թափել Աւնրկայ բերդին վրայ, և ազատման ճարը կտրել: Արդէն բերդին ջուրն ալ պակսեր էր: Մսիր պահապաններէն և զինուորներէն զատ մարդ չթողուց հոն, մէկալ մարդիկը վռնտեց: Յուլիս ամսու վերջի օրն էր. եղանակին տաքութիւնն պատերազմին սաստկութեանը հետ խառնուած՝ մահուշափ կը տագնապէր պաշարուածները: Մսիր երկայն ատեն յուսահատ յամառութեամբ դիմացաւ. բայց տեսնելով որ քարէ կարկուտն չի դադրիր, այլ ամեն բան կը կործանէ, իր տեղակալը աղաչաւոր խաւրեց Միրզա Մէհմէտ սուլթանին, որ բարեխօս ըլլայ տու պապին. սա՛ այս անգամ ալ յանձն առաւ ներելու, եթէ Մսիր չուշանայ իրեն գալու: Բայց երբ նա նորէն յամառեցաւ կամ թէ յիմարեցաւ, թաթարը գիշերանց նեղու անկոխ ճամբաներէ ելնելով՝ հասան ինչուան միջնաբերդին դրսի կամարակապ պարիսպներուն. և մէկ քանիին վրան ելնելով շատ դժարութեամբ՝ հասան ինչուան բերդին վերջի պատերուն, և սկսան մրձով և նգով զարնել ու խարխարել, ու հեծաններ դնել որ վրանին չփլչին: Երբ զայս տեսան պաշարողքն՝ բոլորովին յուսահատեցան, զէնքերնին թողուցին. ոմանք ալ սկսան իրենք զիրենք ժայռերէն վար անդունդներու մէջ նետել: Վերջապէս Մսիր ալ տեսաւ որ ալ դէմ կենալու ճար չկար. նորէն մայրը և որդին խաւրեց որ խանին ոտքն ընկնալով գլխովին խընդրեն: Մօր մը և որդեկի մը լացն և խեղճութիւնն՝ բռնաւորին սիրտը շարժեցին. խոստացաւ շնորհելու Մսիրայ կեանքը, եթէ ինքնին գայ խնդրելու զնոյն: Նա դեռ այն օրն ալ իր կանգուն մնացած քարերուն մէջ կեցած՝ կը մտածէր թէ արդեօք լաւ չէ անոնց հետ և անոնց տակ ընկնիլ, քան թէ կաղ բռնաւորի մը ոտից տակ. սակայն տեսնելով որ հաւատարիմ ծառաներն անգամ զինքը կը թողուն, թողուց ինքն ալ իր յուսոյ բոյնը: Երկրորդ օրը, օգոստոսի կիսուն, Մսիր վիզը դաստա-

ռակ մը ձգած և մերկ սակուր մը բռնած, իջաւ, նախ Միրզա Մէհմէտ Սուլթանին ոտքն ընկաւ, և անոր պաշտպանութեանը ապաւինելով՝ եկաւ անձնատուր ըլլալու առ Լէնկթիմուր: Սա ալ կարգէ զուրս գլխովին մը ցուցնելով, շնորհեց կեանքը, և պատուիրեց որ տարուի 'ի Սուլթանիէ և անկից 'ի Սմրղանտ: — Աւնրկայ մնացեալ շէնքերը չաւրեց Լէնկթիմուր. միայն մարտկոցները և զէնքերը վերուց. մէջը դրուած գանձերը և կարասիքը բաժնեց անոր առման ատեն աղէկ աշխատողաց. իսկ Մսիրայ մարդիկներէն աղէկ աշխատողաց վարձք՝ հարիւր հոգի ժայռերէն վար գահաժիծեց. իբրեւ թէ առանց այսպիսի մարդազոհի մը սիրտն չէր հանգչէր: Հինգ օր հոն կեցաւ, հանդէսներ և խնջոյքներ կատարեց. վասն զի արդէն մալմանաց պայրամի օրերն էին. վեցերորդ օրը Աւնրկայ բերդը յանձնեց Աթըլմիշ էմիրին, և իջաւ վար: Յուլիսի չորսն էր երբ հասաւ հոս, Օգոստոսի 21^{ին} հեռացաւ. ըսել է որ յիսուն օրի չափ Լէնկթիմուր մը ուշացընող բերդն՝ շատ ամուր բերդ է եղեր, և արժանապէս Աւնիկ՝ անառիկ ըսուեր է:

Շատ տարի վերջը՝ երբ Լէնկթիմուր Օսմանեանց Սուլթանին վրայ կ'երթար, և դեսպան խաւրելով պատասխանի կը սպասէր 'ի Պայէզիտայ՝ եկաւ Աւնրկայ քով ամիս մը նստաւ, իր հին աշխատանաց յիշատակով նոր և մեծագոյն աշխատանաց պատրաստուելու. իր վերջի տարին ալ (1405) Տուլատի անունով մէկն էր Աւնրկայ վերակացուն: Իր մահուրէն ետքը շատ չանցաւ Մսիրայ սեախոյ (Գարա-գոյունլու) ցեղակիցքն նորէն տիրեցին իրենց ժառանգութեանը. նորէն ամբըցուցին, և նորէն ազատութեան բոյն մ'եղաւ բերդն Աւնրկայ. և երբ հարիւր տարիէ աւելի վերջը, 1535^{ին}, սուլթան Սիւլէյման Պարսից Թահմազ Շահին դէմ պատերազմի կ'երթար՝ տիրելով արեւմտեան Հայաստանի, տարեկից յիշատակազիր մը կ'ըսէ, « Բռնացեալ, էառ 'ի հիւսիսա-

« յին կողմանէն՝ մինչ 'ի Բերդն Աւեր-
« կայ » . գուցէ այն ատեն աւրուեցան
լէնկթիմուրէն խնայուած պարիսպ-
ներն . և անկէ ետե պատմութեան մէջ
չերեար ազատօրէն, կամ ես չեմ գիտեր .
բայց բնութեան և հնութեան մէջ դեռ
կեցած է իր զարմանալի և ահարկու
կերպարանքը . որոյ վրայ՝ Լէնկթիմու-
րի ըրած վնասն՝ գուցէ ըլլայ միայն
իբրեւ մէկ սպի մը հսկայազօր մարտիկի
մը մարմնոյ վրայ, 'ի մէջ շատ սպեաց՝
զոր անկէ առաջ և վերջը ընդունած է,
ինչուան որ անհրաժեշտ մահացու հա-
րուած մը զինքն ալ անկենդան թողած
ըլլայ . զոնէ երկար ատեն... վասն զի
մեռեալ բերդերն երբեմն յարութիւն
կ'առնուն . և նոր բերդապահ հին բեր-
դապահաց գերեզմանները կը պսակեն,
անոնց քով բուսած անպակաս և ան-
ջինջ ծաղկներով : ...

ԺԹ. Աւերկայ սահմանէն չհեռացած՝
ուրիշ հայրենի նշխարը և նշմարը մ'ալ
քննելու է անոր արեւմտակողմեան հո-
վիտներուն մէկուն մէջ, զոր իշ վտակը
կ'ուռգէ : Ասոր անուամբ ձեացեալ իշ-
խոռ կամ իշխաւ անուն գիւղ մը կայ
Հայոց, իբր 30 անով . բայց հին և բազ-
մատուն տեղոյ մը աւերակաց մէջ միայ-
նացեալ, կամ մարդաշատ քաղաքի
մը նշխար մոռացեալ . գուցէ Ոկոմեայ
նման տեղ մը, կամ Արծիւն, որոց
կեանքն իրենց մահուան պատճառաւ
միայն կը յիշուին : Այս տեղիս գլխա-
ւոր յիշատակարանն և իբրեւ քարոզակն
անցեալ շինութեան և կենդանութեան՝
աշտարակ մ'է, բարձր ու բոլորշի . աշ-
տարակ մը՝ պահապանի պէս մինակ
կեցած աւերակաց և ամայութեան մէջ .
50' բարձրութեամբ և 9' տրամագծաւ,
տաշած ու շիտակ շարած քարերով,
վայելուչ հայկական կամ սառակինեան
քանդակներով . որ թէ և աւրուած են,
բայց դեռ ոչ քայքայած . միայն աշտա-
րակին ծայրերը կոտրտած են, որով
ոմանք կարծեն՝ թէ շատ աւելի բարձր
եղած ըլլար . պտուտած և սանդուղ մը
միջէն ինչուան վեր կը հանէ . խարխիւր

կամ վարի կողմին ձեւը՝ կարծել կու տայ
թէ զանգակատուն էր . այսպէս կա-
ւանդեն և բնակիչքն : Քանի մը քա-
րնկէց հեռու կայ հին և վայելուչ փոքր
եկեղեցւոյ մ'աւերակ, իբր 30' երկայ-
նութեամբ, և կիսէն աւելի լայնու-
թեամբ . պատերուն թանձրութիւնը
դիտողին սիրտն՝ կը վկայէ թէ բրո-
նութեամբ քակտուեր է և ոչ հնու-
թեամբ . չորս դին ալ կան գեղացոց
և մեր նախնեաց գերեզմանքն՝ կեն-
դանակերպ մահարձանք : Քանի մը
քարընկէց ալ հեռուն քարաժայռի մէջ
փորուած խաչաձև սենեակ մը կայ . բնա-
կութեան, թաղման թէ պաշտաման
տեղ... : Կարելի է Լէնկթիմուրայ զօրքն
Աւերկայ պաշարման ատեն աւրած ըլ-
լան այս տեղս : — Պատմութիւնն կը
լռէ իշխուի անունն և դէպքերը . բայց
ինծի անտարակոյս կ'երևի որ սա ինքն
է ասկէ 1500 տարի առաջ յիշուած
Ոսխաւ գիւղն կամ Ոսխաւ տեղիքն,
ուր Դ դարուն կիսէն վերջը Հայք և
Պարսք իրարու հետ քանի մը հեղ կը-
ռուեցան, ըստ Բուզանդայ, և (որ չէ հա-
ւանելի) Պարսից թագաւորքն Ներսէս և
յետոյ Շապուհ՝ անձամբ եկեր էին
կռուի, և յաղթուած փախան :

Ինծմէ աւելի ժամանակ ունեցողին
կը թողում Ոսխայ և Աւերկայ միջոց և
մօտ եղած Թաւաւ կամ Թաւունց գիւղն
ալ քննել, Հարսնէքարն ալ . և եթէ
ասոր անունէն հրապուրեալ՝ հարսին մը
յիշատակարան փնտռէ և չգտնէ, դառ-
նայ մեր նախ յիշեալ Եաղան գիւղը .
բնակիչքն իրենց գերեզմանաց մէջ կը
ցուցնեն Աւերկայ թագաւորի մը գե-
ղեցիկ դստեր գերեզման մը . անոնց
հարցնէ ասոր դիպուածը :

Կը շարունակուի :